չափն Ֆարենայդայ ց'19° ընդ զոյիւ (— 26° Ռէօ-միւրի)։ ոչ ինչ պակաս Թուի և 'ի բարձրաւանդակս Գարապաղու, Վանայ և Կորդուաց։ արևմտակողմն միջին և հարաւային Հայոց բարեխառնագոյն կամ ջերմագոյն է։ նոյնպէս և դաշտակողմն արևելեան աշխարհին և կողմանք Գանձակայ, ուր և ձմերոցք էին Թագաւորացն Հայոց, յՈւտի նահանգի, և ա-նապատն Մուղան, խորաձորք ինչ Կորդուաց և կող-մանք Տիարպէքիրու։ — Բայց զարմանալի այս է, զի սահման մշանջենաւոր սառամանեաց որ 'ի Կովկաս ստորև է քան զ'10000', յԵրևրոպա քան զ'9000' և 'ի Պիւրենեայս քան զ'8000' անգամ, 'ի ցրտագոյն կող-մանս անդ հիւսիսային Հայոց՝ բարձր է քան զ'13000'։ որպէս զի սմարանի զերծանին 'ի ձեանց ամենայն լե-ռինք Հայոց՝ բաց յաւագ Մասեաց, և յԱրարատ ու իսկ կատարս (128) ոչ նշմարի ձիւն, այլ 'ի խառնուս ուրեք։ զարմանալի և այս՝ զի հարաւայնագոյն լերինք Պինկէօլայ և Քրդաստանի ձիւնապատք են 'ի 10500 ոտից և 'ի վեր։ Պատճառ օտարակերպ երևցս՝ բը-նութիւն քարանցն է և սեւութիւն նոցին՝ որ առաւել կրէ զջերմութիւն, այլ և կոնաձև անջատ միայնութիւն նոցին՝ որով ամենուստ ընդունին զճառագայթս։ ըստ ոմանց և ներքին հրակիր զօրութիւն երկրին։ — Ի ջերմագոյն կողմանս՝ մարտ ամիս նշան տայ դարնայ-նոյ, այլ 'ի հասարակի յապրիլի բանին դրունք նորին և երևին կանուխք բուսոց, և 'ի վերջ կոյս նորին ար-կանի սերմն։ 'ի մայիսի ծաղկեն ծառք պտղատուք և տերևք արձակին։ յայնժամ եղանեն անդէորդք 'ի կողս լերանց և յեմակս, որք ամսով յառաջ դեգերին 'ի ջերմահովիստ խորանիստ վայրաց, և յետ ամսոյ ե-լանեն 'ի սարաւանդակս և 'ի բարձունս, և արածեն անդ զամիսս չորս։ բայց 'ի Կարին է զի և 'ի յունիսի տագնապեցուցանէ ցուրտն, և 'ի գիշերի պաղ ջուր։ և մինչ այն ինչ դեռ արձակեալ են 'ի նմա տերևք և արգիւնք անդաստանաց՝ 'ի հովիստ Թորթումայ հա-սունանայ կեռաս, և մինչև հասկաց ուռճացեալ 'ի նմա՝ յԵրզնկայ ատոքացեալ մերձին 'ի հունձս։ Զչետ երկար ձմերայնոյ հասանէ փութով ամառն հզօր, հա-մառօտելով զգարուն։ և 'ի սուղ ժամանակի երից ամսոց (1) բողբոջէ, դալարանայ, ծաղկի և պտղա-բերէ երկիրն սեւահող և արգաւանդ։ յԵրասխեան դաշտին կանխեն հունձք քան 'ի կողմանս Կարնոյ, և խաղող 'ի սահմանս Երևանայ վաղ հասունանայ քան 'ի բարեխառնն Պոնտոս, քանզի զօրանայ յոյժ տապն, և ասպիճան ջերմութեան բարձրանայ յԵրևան քան զ'100° (Ռէօմիւրի 30°) որպէս զի իբրև 120° զանա-զանիլ օդոց անդ 'ի խորս ձմերայնի և ամարանոյ։ Բայց 'ի Կարին չեն այսքան սասկիկ հակառակքն։ Զջերմագին աւուրս յաջորդէ աշուն ոչ շատ երկար քան զգարուն, և տեղի տայ ձմերան։ Եղանակս այս ձիւնաշատ է 'ի Հայս և հիւսիսաշունչ։ դարուն անձ-րեւառատ և բարեխառնեալ արևմտեան հողմով, ա-մառն երաշտ և հարաւախառն արևելեան հողմով

(1) Իմա Գարընոյն կոչեցեալ։ զի լինի 'ի Հայս և Ա-ղընոյն սերմնարկութիւն՝ որ հնձի 'ի յաջորդ ամարան կամ յաշնայնի։

հնչեալ։ և զի ոչ սակաւ ուրեք նուազէ ջուր և գետք 'ի խորւոջ կան, բազում աշխատութեամբ և ճար-տարութեամբ ոռոգեն զերկիր ազգի ազգի ջրագար-ձիք։ Օդք 'ի հասարակի անախտք են և առողջա-սունք, բաց յերևանեան կողմանց։ և յերկարակեցու-թեամբ բնակչաց բազում կողմանց վկայի այս։ տենդ և հարբուխ միայն են հասարակ ախտք երկրին։ Բայց ոչ գտաւ զերծ և 'ի մաղձախտէն (քոլերա), որպէս և 'ի սրածութեանց ուստեք 'ի հնումն։

27։ ԲՈՒՍԱԲԵՐՈՒԹԻՒՆ Հայաստան աշխարհի կարի բարգաւաճ է, օժանդակութեամբ պատուական հողոյն և ջրոց և ամառնային ջերմով։ այլ 'ի սակս եր-կարութեան ցրտոյ ոչ բաւէ բերել զբերս հարաւային աշխարհաց, և թափուր է յանտառաց բազում ուրեք։ սակայն կարևոր բոյսք և դալարիք և արդիւնք ոչ միայն առաւք և հասարակածաւալք են, այլ և գտանին 'ի բարձունս՝ յոր յԵրևրոպա ոչ ժամանեն։ զի և ցորեան պատուական լինի 'ի Կարին 'ի 5800' բարձու, և 'ի կողմանս Պինկէօլայ և Վանայ ց'6500', ընդ նմին և գարի։ ուր յԵրևրոպա գարի հաղիւ ժամանէ 'ի 5200' 'ի հարաւակողմն Պիւրենեայց, այլուր և ոչ 'ի 4000', իսկ ցորենոյ ցածագոյն ևս են սահմանք։ և այգիք որ յԵրևրոպա չբարձրանան քան զ'2500', 'ի Հայս գտա-նին յԱրարատեան դաշտի 'ի 4250', և 'ի Մասիս 'ի 4013', իսկ 'ի կողմանս Վանայ ց'5100'։ Ըստ այմ օրինակի և ծառք վայրիք։ կաղամախ 'ի բարձրաւան-դակին Կարնոյ գտանի 'ի 6000' բարձու, և բարտի որ յԵրևրոպա չանցանէ ըստ 5500', 'ի Փոքրն Մասիս աճէ ց'7800' և 'ի լերին Սուկաւայ ց'8200' բարձու։ Բայց որպէս կանխեցաք ասել՝ սակաւափայտ է Հայ-աստան, և ծառք անտառի ոչ յոյժ յաղթք և բարձ-բաբերք։ յաճախագոյն վայրի ծառք 'ի Հայս են բար-տի, ուռենի, փշատենի, կաղամախ, և կաղամախ երե-բուն (populus tremula) և սոսի՝ մանաւանդ յարևե-լակողմն։ Նուազագոյն են կաղնիք և պտղի, եղևնք, յակրի և գիհի, արքակաղնի և այլ ծառք։ ընդ որս 'ի ցածագոյն վայրս գտանին և մուրտ և տոսոս և դափնի, և մայր փայտք, շոճի և փիճի 'ի հարաւակող-մանս։ Բայց գոն և անտառք 'ի կողմանս Խաղտեաց, 'ի Սօղանլու լերինս ընդ մէջ Տայոց և Արարատայ, 'ի Գուգարս ('ի Բամբակի և այլն), յԱրցախ ընդար-ձակ անտառք և 'ի Գարապաղ։ իսկ յայլ կողմանս նուազունք և փոքունք, որպէս յԱղձնիս, 'ի կողմանս Ամդայ և Բաղիշու, այլ և 'ի Դ Հայս, յորս են կաղ-նիք, նոճք, հայիք, եղևնք։ Ի լերինս անջրպետս ա-կանց Արածանւոյ և Երասխայ են անտառք կամ մա-յտառք Թխտենեաց, և 'ի հարաւոյ Քէլիկէտիկ լե-ռանց յերէզս Կէօքսուի և Թորլուի՝ մացառք մամ-խեաց։ ոչ սակաւ Թփուք են և 'ի կողմանս Օլթեայ և Կառիմանայ և առ ափամբք Ճորոխի՝ ուր և անտառք խիտ։ — Լեռնատորոտ կամ ստորալպեայ (subalpines) բոյսք ժամանեն 'ի Հայս ց'8800', այլ նուազունք են։ իսկ բուն լեռնաբոյսք կամ ալպեայք (alpines) ա-ռատք են յոյժ և ժամանեն ց'11000', և բազմազա-նագոյնք են քան զկովկասայինս, և գտանին 'ի նոսա ոչ սակաւ յայտնասերմն բոյսք (phanérogame), որք յալպեայս Եւրոպայ կամ ոչ բնաւ կամ դուն ուրեք